Հավելված 2
2025 թ. հունվարի 17-ին
կնքված ԱՍՀՆ-ԴՄ-ՍԾՕ-25/1 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Սոցիալական շտապօգնություն |
| **Դրամաշնորհի N** | ԱՍՀՆ-ԴՄ-ՍԾՕ-25/1 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Հույս տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ) |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01-31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 03.01-31.03.2025 |
| **Ներկայացման օր** | 01.04.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Հռիփսիմե Մանուկյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածում ըստ աշխատանքային պլանի և պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված էին հետևյալ գործողությունները՝

***<u>Գործողություն 1</u>***

Նախապատրաստել Հույս տան սննդամթերքի և տնտեսական ապրանքների պահեստները՝ համապատասխանեցնելով ՍԾՕ ծրագրի պահանջներին: Թարմացնել «Հույս տան» հաշվապահական համակարգում Ծրագրի նախորդ փուլում ստեղծված էջը և իրականացնել ՍԾՕ ֆինանսական և ապրանքաշրջանառության գործողություններ: Ստեղծել և պարբերաբար թարմացնել ապրանքների մուտքի-ելքի էլեկտրոնային և թղթային մատյանները:

***<u>Գործողություն 2</u>***

Կազմել շահառուներին բաշխվելիք սննդի և տնտեսական պարագաների փաթեթների ձևավորման համար անհրաժեշտ ապրանքների ցանկը, ծավալը, ըստ պարենային անապահովության աստիճանների որոշել սննդային փաթեթների տեսակները և ներկայացնել Նախարարության հաստատմանը:
Ձեռք բերել անհրաժեշտ պայմանավորվածություններ ընտրված մատակարարների, առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նվիրատուների հետ:
Նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ համաձայնեցնել բաշխման փաթեթի և արկղի ձևը, չափը: Պատվիրել դրանց համապատասխան խմբաքանակը:
Ծրագրային աշխատակիցների և կամավորների ջանքերով, ըստ շահառու ընտանիքների կարիքների, նախապատրաստել օգնության փաթեթները:

***Գործողություն 3***

Կնքել պայմանագիր գործընկեր բանկի հետ՝ ապահովելով համապատասխան խմբաքանակի բանկային քարտերի թողարկումը, ինչպես նաև ներդնելով սահմանափակումներ, ըստ որի շահառուները քարտերը կկարողանան օգտագործել միայն սննդային խանութներում անկանխիկ գնումներ կատարելու համար:

***Գործողություն 4***

Մշակել Երևանի և մարզային ՄՍԾ-ներից էլեկտրոնային փոստով և Հրատապ արձագանքման հարթակի միջոցով ստացված շահառուների հայտերը և դասակարգել՝ ըստ շահառուների կարիքների գնահատման թերթիկների՝ ապահովելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

***Գործողություն 5***

Ըստ ՄՍԾ ՏԿ-ների կողմից ներկայացված հայտերի՝ կազմակերպել Ծրագրի 250 շահառու ընտանիքներին սննդամթերքի և տնտեսական պարագաների փաթեթների բաշխումը Երևանում՝ «Հույս տան» ՄՇՕՀ հենակետում, իսկ թիրախ մարզերում՝ ՄՍԾ տարածքային կենտրոններում կամ նրանց կողմից տրամադրված համապատասխան այլ տարածքներում: Ծրագրի պահանջներին համապատասխան՝ ապահովել օգնության առաքումը շահառուների հասցեներ:

***Գործողություն 6***

Ըստ ՄՍԾ ՏԿ-ների կողմից ներկայացված հայտերի՝ ապահովել 500 շահառուների համար նախատեսված բանկային քարտերի թողարկումը: Սննդային քարտերի տրամադրումը Երևանում տեղի կունենա գործընկեր բանկի մասնաճյուղերում, ՄՍԾ տարածքային կենտրոններում կամ նրանց կողմից տրամադրված տարածքներում բանկի ներկայացուցչի և ծրագրի պատասխանատուների կողմից:

Բաշխման ընթացքում շահառուները կտեղեկացվեն քարտերի օգտագործման պայմանների և առկա սահմանափակումների վերաբերյալ:

***Գործողություն 7***

Ըստ ԱՍՀ Նախարարության հետ հստակեցված չափորոշիչների՝ ընտրված շահառուներին բաշխել Նախարարության կողմից Հիմնադրամին տրամադրված ապրանքատեսականու (բնաիրային) բաշխումը: Որպես լրացուցիչ աջակցություն Հիմնադրամի կողմից շահառուներին տրամադրել նաև հագուստ, միրգ և բանջարեղեն:

***Գործողություն 8***

Փորձարկել Հրատապ արձագանքման հարթակի միջոցով Ծրագրի շրջանակում Հիմնադրամի և ՄՍԾ ՏԿ-ների հետ համագործակցության մեխանիզմները, վեր հանել խնդիրները և ներկայացնել բարելավման առաջարկներ:

***Գործողություն 9***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացնել ամսական ֆինանսական, ինչպես նաև եռամսյակային նկարագրական հաշվետվություններ կատարված աշխատանքների և շահառուներին բաշխված աջակցության վերաբերյալ:

Ներկայացնել առաջարկներ Ծրագրի ընթացքում առաջացած խնդիրների լուծման, իրավական դաշտի և Հրատապ արձագանքման հարթակի բարելավման, շահառուների թիրախավորման և կարիքի գնահատման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ծրագրի ավարտից հետո ներկայացնել ավարտական պատմողական և ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաև վերլուծական ամփոփիչ առաջարկներ Ծրագրի հետագա բարելավման ուղղությամբ:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները՝

**Գործողություն 1**

**1.1.** Ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով կազմվել է աշխատակազմ՝ բաղկացած Ծրագրի համակարգողից, համակարգողի օգնականից, հաշվապահից, գնումների մասնագետից, բաշխման պատասխանատուից, պահեստապետից և վարորդից:

**1.2.** Համագործակցության հրավերներ են առաքվել կամավորներին և ձեռք բերվել պայմանավորվածություն Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումներին և սոցիալական ակցիաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

**1.3.** Հունվարի 8-ին «Հույս տանը» տեղի է ունեցել աշխատանքային քննարկում Ծրագրում ներգրավված աշխատակիցների միջև, որի ընթացքում քննարկվել և հստակեցվել են Ծրագրի շրջանակում աշխատանքների և միջոցառումների իրականացման կազմակերպչական հարցեր:

**1.4.** Ծրագրում համակարգողի օգնականի հաստիքը զբաղեցնելու նպատակով հունվարի 10-ին հայտարարվել է մրցույթ: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ (Հավելված 1) որպես Ծրագրի համակարգողի օգնական է ընտրվել Մանե Խաչատրյանը, ում հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր (Հավելված 2):

**1.5.** Ծրագրի ընթացիկ աշխատանքների կազմակերպման նպատակով հունվարի 13-ին ՄՍԾ գրասենյակում կազմակերպվել է հանդիպում, որին մասնակցել են ՄՍԾ սոցիալական աշխատանքի և սոցիալական ծառայության վարչության պետ Հովսափ Գևորգյանը, ՄՍԾ սոցիալական աշխատանքի և սոցիալական ծառայության վարչության ծառայությունների կազմակերպման բաժնի պետ Գայանե Չիլինգարյանը և Բաժնի փորձագետ Գարիկ Ունուսյանը, ինչպես նաև Հիմնադրամի տնօրենի տեղակալ Արտակ Վերդյանը և Ծրագրի համակարգող Հռիփսիմե Մանուկյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ծրագրի շրջանակում նախատեսվող աշխատանքները, ինչպես նաև հստակեցվել հետագա քայլերը:

**1.6.** Հունվարի 17-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Հույս տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի միջև կնքվել է դրամաշնորհային պայմանագիր:

**1.7.** Նախապատրաստվել են Հույս տան սննդամթերքի և տնտեսական ապրանքների պահեստները՝ հարմարեցնելով ՄՇՕ ծրագրի պահանջներին:

**1.8.** Թարմացվել է «Հույս տան» հաշվապահական համակարգում Ծրագրի նախորդ փուլում ստեղծված էջը և իրականացվել ՄՇՕ ֆինանսական և ապրանքաշրջանառության գործողություններ:

**1.9.** Ստեղծվել և պարբերաբար թարմացվել են ապրանքների մուտքի-ելքի էլեկտրոնային և թղթային մատյանները:

**Գործողություն 2**

2.1. Կազմվել և ԱՍՀ Նախարարության կողմից հաստատվել են շահառուներին բաշխվելիք սննդի և տնտեսական պարագաների փաթեթների ձևավորման համար անհրաժեշտ ապրանքների ցանկը, ծավալը, ըստ պարենային անապահովության աստիճանների որոշվել են սննդային փաթեթների տեսակները: 1-5 անդամ ունեցող ընտանիքների համար նախատեսված է «սովորական», 6-9 անդամ ունեցող ընտանիքների համար՝ «միջին», իսկ 10 և ավել անդամ ունեցող ընտանիքների համար՝ «հագեցած»

փաթեթներ:

2.2. Սննդամթերքի և տնտեսական ապրանքների մատակարարման նպատակով հունվարի 30-ին tender.am հարթակում հայտարարվել է մրցույթ: Ըստ ներկայացված գնառաջարկների՝ Մրցույթային հանձնաժողովը ընտրել է մատակարար կազմակերպություններին (Հավելված 3՝ Մրցույթի արձանագրություն), որոնց հետ կնքվել են մատակարարման պայմնագրեր (Հավելված 4՝ Մատակարարման պայմանագրեր):

2.3. Նախարարության հետ համաձայնեցվել է բաշխման փաթեթի և արկղի ձևը, չափը: Պատվիրվել է դրանց համապատասխան խմբաքանակը:

2.4. Ծրագրային աշխատակիցների և կամավորների ջանքերով, ըստ շահառու ընտանիքների կարիքների, նախապատրաստվել են օգնության փաթեթները:

***Գործողություն 3***

**3.1.** Հաշվի առնելով նախորդ դրական փորձառությունը՝ մարտի 26-ին Այ Դի բանկ ՓԲԸ-ի հետ կնքվել է պայմանագիր (Հավելված 5): Քարտերի վրա գործելու է կանխիկացնելու սահմանափակում: Շահառուների տրամադրվող ֆինանսական աջակցության չափը կազմելու է 18.500 ՀՀ դրամ:

***Գործողություն 4***

**4.1.** Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն Երևան քաղաքի ՄՍԾ տարածքային կենտրոնների կողմից ներկայացված կարիքների գնահատման ընդհանուր առմամբ **10** թերթիկների (Հավելված 6), շահառուներին տրամադրվել են սննդամթերքի (Հավելված 7) և տնտեսական պարագաների փաթեթներ (Հավելված 8):

Օգնության փաթեթները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ✓ **Աջափնյակ և Դավթաշեն ՄՍԾ-ից՝ 1**
- ✓ **Նոր Նորք և Ավան ՄՍԾ-ից՝ 1**
- ✓ **Էրեբունի և Նուբարաշեն ՄՍԾ-ից՝ 2**
- ✓ **Արաբկիր-Քանաքեռ-Զեյթուն ՄՍԾ-ից՝ 4**
- ✓ **Կենտրոն-Նորք Մարաշ ՄՍԾ-ից՝ 2**

- **8** շահառու ընտանիքի տրամադրվել է «Սովորական» փաթեթ:
- **2** շահառու ընտանիքի տրամադրվել է «Միջին» փաթեթ:

Հաշվետու ժամանակահատվածում **7** շահառուներին օգնության փաթեթները տրամադրվել են Հուսո տան ՍԾՕՀ հենակետում: Իսկ **3** շահառուի փաթեթները, ըստ Պայմանագրով նախատեսված դեպքերի, առաքվել են իրենց հասցեներով:

***Գործողություն 5***

**5.1.** Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացվել են ամսական ֆինանսական հաշվետվությունները:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հիմնադրամը շահառուների տվյալները մինչ օրս ստանում է պաշտոնական էլեկտրոնային հասցեի միջոցով, իսկ Հրատապ արձագանքման հարթակը չի գործարկվում, քանի որ առկա են Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հասանելիության հետ կապված խնդիրներ: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

***Գործողություն 1***
Մշակել Երևանի և մարզային ՄՍԾ-ներից էլեկտրոնային փոստով և Հրատապ արձագանքման հարթակի միջոցով ստացված շահառուների հայտերը և դասակարգել՝ ըստ շահառուների կարիքների գնահատման թերթիկների՝ ապահովելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

***Գործողություն 2***
Ըստ ՄՍԾ ՏԿ-ների կողմից ներկայացված հայտերի՝ կազմակերպել Ծրագրի 250 շահառու ընտանիքներին սննդամթերքի և տնտեսական պարագաների փաթեթների բաշխումը Երևանում՝ «Հույս տան» ՄՇՕՀ հենակետում, իսկ թիրախ մարզերում՝ ՄՍԾ տարածքային կենտրոններում կամ նրանց կողմից տրամադրված համապատասխան այլ տարածքներում: Ծրագրի պահանջներին համապատասխան՝ ապահովել օգնության առաքումը շահառուների հասցեներ:

***Գործողություն 3***
Ըստ ՄՍԾ ՏԿ-ների կողմից ներկայացված հայտերի՝ ապահովել 500 շահառուների համար նախատեսված բանկային քարտերի թողարկումը: Սննդային քարտերի տրամադրումը Երևանում տեղի կունենա գործընկեր բանկի մասնաճյուղերում, ՄՍԾ տարածքային կենտրոններում կամ նրանց կողմից տրամադրված տարածքներում բանկի ներկայացուցչի և ծրագրի պատասխանատուների կողմից:
Բաշխման ընթացքում շահառուները կտեղեկացվեն քարտերի օգտագործման պայմանների և առկա սահմանափակումների վերաբերյալ:

***Գործողություն 4***
Ըստ ԱՍՀ Նախարարության հետ հստակեցված չափորոշիչների՝ ընտրված շահառուներին բաշխել Նախարարության կողմից Հիմնադրամին տրամադրված ապրանքատեսականու (բնաիրային) բաշխումը: Որպես լրացուցիչ աջակցություն Հիմնադրամի կողմից շահառուներին տրամադրել նաև հագուստ, միրգ և բանջարեղեն:

***Գործողություն 5***
Փորձարկել Հրատապ արձագանքման հարթակի միջոցով Ծրագրի շրջանակում Հիմնադրամի և ՄՍԾ ՏԿ-ների հետ համագործակցության մեխանիզմները, վեր հանել խնդիրները և ներկայացնել բարելավման առաջարկներ:

***Գործողություն 6***
Կազմակերպել առնվազն 3 տեղեկատվական ակցիա, ներգրավել անհատ բարերարներ և կազմակերպություններ Ծրագրում ներդրումներ ապահովելու նպատակով:
«Հույս տան» կայքում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում և այլ լրատվական միջոցներում պարբերաբար լուսաբանել Ծրագրի ընթացքում կազմակերպվող միջոցառումները: Իրականացնել իրազեկման աշխատանքներ ՄՇՕ գործառնության, ակցիաների կազմակերպման, կամավորների հավաքագրման և դրանց արդյունքների վերաբերյալ:

***Գործողություն 7***
Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացնել ամսական

ֆինանսական, ինչպես նաև եռամսյակային նկարագրական հաշվետվություններ կատարված աշխատանքների և շահառուներին բաշխված աջակցության վերաբերյալ:
Ներկայացնել առաջարկներ Ծրագրի ընթացքում առաջացած խնդիրների լուծման, իրավական դաշտի և Հրատապ արձագանքման հարթակի բարելավման, շահառուների թիրախավորման և կարիքի գնահատման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:
Ծրագրի ավարտից հետո ներկայացնել ավարտական պատմողական և ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաև վերլուծական ամփոփիչ առաջարկներ Ծրագրի հետագա բարելավման ուղղությամբ:

**2.5 Խնդրում ենք նշել Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| |